«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ԱՊԱՇՐԱՉԱՓԱԿՈՒՄ

Ռոման Կարապետյան
Երևանի Պետական Համալսարան
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ
միջազգային հարաբերությունների և
դիվանագիտության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ.
roman.karapetyan@ysu.am

Ժամանակակից աշխարհում մեծ թիվ են կազմում հակամարտությունները, որոնք իրարից տարբերվում են իրենց բնույթով, հակամարտող կողմերի քանակով, դրանցում միջազգային ուժային կենտրոնների խաղացվող շահերով և այլն: Գաղտնիք չէ նաև, որ քիչ են օրինակները, երբ տարածքային հակամարտությունները գտնում են կարգավորման խաղաղ կամ արդարացի լուծում. թեպետ վերջին տերմինը միջազգային քաղաքական գործընթացների մասով կիրառելը մեղմ ասած արդարացված չէ: Մի կողմ դնելով բանակցող կողմերի դիրքորոշումների միջև առկա ակնհայտ տարբերակվող մոտեցումները, պետք է հստակ փաստել, որ Արցախյան հիմնախնդիրը դասվում է ամենաբարդերի շարքին, որտեղ կան ինչպես երևացող, այնպես էլ՝ թաքնված խաղացողներ: Մյուս կողմից էլ, հարկ ենք համարում նշել, որ Արցախյան հակամարտությունը տարբերվում է մյուս հիմնախնդիրներից իր էությամբ. ըստ մեր սուբյեկտիվ դիտարկման, այն դուրս է դասական տարածքային հակամարտությունների շարքին դասվելուց: Խնդիրը կայանում է նրանում, որ Արցախյան հիմնախնդիրը առաջին հերթին ոչ թե տարածքային հակամարտություն է, այլև՝ ճանաչման հարց: Ավելին, խոսքը գնում է այնպիսի կայացած պետության ճանաչման մասին, որն արդեն տասնամյակներ շարունակ ապացուցում է իր ինքնուրույն գոյապահպանման ունակությունը:

Ընդհանրապես, պետությունների ճանաչման հարցը ժամանակակից քաղաքագիտական մտքում ամենաշատ քննարկվող հարցերից մեկն է: Մինչև այժմ չկա տրված հստակ պատասխան այն հարցին, թե ինչ է նշանակում ճանաչված պետություն: Ուստի «ճանաչում» տերմինն ավելի շատ քաղաքական եզրույթ է, քան՝ քաղաքագիտական հարց: Այսպես են կարծում նաև քաղաքագետների մի մասը: Ըստ այդմ՝ ճանաչման գործընթացը պետության զարգացման հերթական փուլն է միայն, ուստի այն չի կարող հարցականի տակ դնել պետության գոյությունը[1]:

Խոսելով Արցախի Հանրապետության (այսուհետև՝ Արցախ) միջազգային ճանաչման մասին, չենք կարող չանդրադառնալ դրանում Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ Հայաստան) դիրքորոշմանը: Արդյո՞ք Հայաստանը պետք է առաջին քայլը կատարի՝ ճանաչելով Արցախի անկախությունը, կամ ինչու՞ Հայաստանը չի անում դա: Փորձենք հարցին առավել խորքային պատասխան տալ՝ անդրադառնալով հարցի վերաբերյալ հայ քաղաքագիտական հանրույթում առկա տեսակետներին: Նրանցից մի մասի կարծիքով Հայաստանի կողմից Արցախի ճանաչումն անհետաձգելի քայլ պետք է լինի: Այս տեսակետի գլխավոր

[1] Iskandaryan A., In Quest of The State in Unrecognised States, “The Unrecognised Politics of De Facto States in The Post-Soviet Space”, Yerevan 2015, pp. 17-34

հիմնավորումը կայանում է նրանում, որ Արցախը կայացած պետություն է, մեզ համար չկա հիմնախնդրի լուծման այլ տարբերակ՝ քան Արցախի անկախ գոյությունն է, ուստի կարգավիճակի շուրջ բանակցելով մենք հարցականի տակ ենք դնում նրա անկախությունը: Մյուս կողմից էլ, որպես հիմնավորում բերվում են Կոսովոյի, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի օրինակները, որոնք միջազգային ճանաչման ուղին սկսել են բռնել բանակցող կողմերից մեկի ճանաչումից հետո: Իսկ Կոսովոյի դեպքում կա նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումն այն մասին, որ վերջինիս անկախությունը չի հակասում միջազգային նորմերին[1]:

Թերևս, առավել տարածված է այն տեսակետը, որ անհրաժեշտ է հետևել Մինսկի Խմբի ձևաչափին և հիմնախնդրի կարգավորմանը հասնել բանակցային ճանապարհով, քանի որ Արցախի ճանաչումը կարող է անկանխատեսելի հետևանքների բերել, այդ թվում՝ բանակցային գործընթացի լիարժեք ձախողման և լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսման: Արդյո՞ք հայկական կողմը պատրաստ է միակողմանի ճանաչման հետևանքով հակառակորդի պատասխանի ցանկացած սցենարի: Կարծում ենք, որ միայն այս հարցի դրական պատասխանը հիմնավորելու դեպքում պետք է հետևել առաջին տեսակետի կողմնակիցներին: Մյուս կողմից էլ՝ չճանաչումը և հակամարտության երկարակեցությունը փոքրացնում է վերջինիս խաղաղ կարգավորման հնարավորությունները:

Իսկ ինչպիսի՞ն է պաշտոնական Երևանի դիրքորոշումն այս հարցում: 2016թ. ապրիլին, երբ արցախա-ադրբեջանական շփման գծում Ադրբեջանը լայնամասշտաբ ռազմական գործողություններ սանձազերծեց, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը խոսեց Հայաստանի կողմից Արցախի ճանաչման հնարավորության մասին՝ որպես Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության միակ այլընտրանքի: Սակայն այդ խոսակցությունները շատ արագ էլ մարեցին, քանի որ հայկական կողմը գտնում է, որ բանակցային ներուժը դեռևս ամբողջությամբ սպառված չէ: Նշենք նաև, որ ՀՀ նախագահը նմանբովանդակ հայտարարություն արել էր նաև 2010թ. ԵԱՀԿ Աստանայի գագաթաժողովին և ՀԱՊԿ երկրների ղեկավարների նիստին՝ հայտարարելով, որ Ադրբեջանի ագրեսիայի շարունակության պայմաններում Արցախի դե յուրե ճանաչումը կարող է Հայաստանի համար լինել միակ ելքը[2]: 2016թ. ապրիլին հայկական կողմը շրջանառության մեջ դրեց նաև Արցախի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր ստորագրելու գաղափարը, սակայն ի վերջո պաշտոնական Երևանն այս հարցում ևս դրսևորեց մեծ զգուշավորություն՝ սահմանափակվելով միայն սպառնալիքներով[3]: Մեր կարծիքով, հայկական կողմի բանակցային դիրքերի ամրապնդման տեսանկյունից առաջ քայլ կլիներ Արցախին բանակցությունների սեղան հետ վերադարձնելը: 2016թ. Մինսկի Խմբի ռուսաստանցի համանախագահ Ի. Պոպովը հայտարարել էր, որ ինչ-որ փուլում Արցախի ներկայացուցիչները պետք է վերադառնան բանակցությունների սեղանի շուրջ. «...չէ՞ որ խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր ապրելու են այդ տարածքում»[4]:

---

[1] Kosovo's independence is legal, UN court rules,- https://www.theguardian.com/world/2010/jul/22/kosovo-independence-un-ruling.

[2] ԼՂՀ ճանաչման հարցի արդիականացումը,- http://www.lragir.am/index/arm/0/comments/view/42546:

[3] Սերժ Սարգսյան. անհրաժեշտ է աշխատել ԼՂՀ-ի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր կնքելու ուղղությամ,- https://news.am/arm/news/320230.html:

[4] Որոշակի փուլում Ղարաբաղը պետք է վերադառնա բանակցային սեղանի շուրջ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ,- http://yerevan.today/all/politics/7443:

Միջազգային ճանաչում չունեցող պետության համար զարգացման ու պետությունների ընտանիքում լիիրավ ամրագրվելու լավագույն գրավականը կարող է լինել ակտիվ արտաքին քաղաքականությունը: Արցախն ավելի քան երկու տասնամյակ որդեգրել է այդ ուղին՝ կապեր հաստատելով ինչպես չճանաչված, մասնակի ճանաչում ունեցող պետությունների, այնպես էլ՝ միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտների հետ: Արցախի արտաքին քաղաքականության ամենաակտիվ ուղղություններից մեկը խորհրդարանական դիվանագիտությունն է: Ներկայումս Արցախն ակտիվ կապեր է պահում Ֆրանսիայի, Բելգիայի և մի շարք այլ եվրոպական երկրների խորհրդա-րանականների հետ, ստեղծվել են միջխորհրդարանական բարեկամական խմբեր: Նման խմբեր գործում եմ Ֆրանսիայի, Լիտվայի օրենսդիր մարմինների, Եվրախորհրդարանի հետ[1]:

Արցախի արտաքին քաղաքականության հաջորդ կարևոր ուղղությունը չճանաչված կամ մասնակի ճանաչում ունեցող երկրների հետ հարաբերություններն են: Արցախը քաղաքական կապեր է պահում Հարավային Օսեթիայի, Աբխազիայի, Մերձդնեստրի հետ: Հատկապես ակտիվ են հարաբերությունները Հարավային Օսեթիայի հետ, ինչի մասին են վկայում երկկողմ պաշտոնական այցերը[2]: Թերևս, Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ ունեցած սերտ կապերն է այն հիմնական պատճառներից մեկը, որ հարևան Վրաստանն ունի կտրուկ ժխտողական դիրքորոշում Արցախի նկատմամբ: Եթե ներկայիս վարչակարգի պայմաններում պաշտոնական Թբիլիսին բավականին զսպվածություն է ցուցաբերում, ապա Մ. Սաակաշվիլու նախագահության տարիներին այն չէր խուսափում այդ մասին բարձրաձայնելուց: Այսպես, 2010թ. հուլիսի 30-ին ադրբեջանական «The Business Year» ամսագրին տված հարցազրույցում Վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլին ասել է. «Վրաստանն ու Ադրբեջանը պետք է պաշտպանեն միմյանց՝ հաշվի առնելով մեր աշխարհագրական դիրքն ու ընդհանուր պատմությունը: Մեր երկու երկրները լուրջ խնդիրներ ունեն չլուծված հակամարտությունների հետ կապված, և Ադրբեջանի ու Վրաստանի ցանկացած ընդդիմախոս մեր երկու երկրների թշնամին է»[3]:

Արցախն ակտիվ կապեր ունի Իսպանիայի հյուսիսում ինքնավարության կարգավիճակ ունեցող Բասկերի երկրի հետ[4]: Կարծում ենք, որ Արցախի արտաքին քաղաքականության թիրախային ուղղություններից մեկը պետք է լինեն Եվրոպական Միության երկրները: Գաղտնիք չէ, որ եվրոպական երկրները առավելապես հակված են տարածքային հակամարտությունների ինքնորոշման իրավունքի իրացման ճանապարհով լուծման տարբերակին*, ինչի վառ վկայությունը Կոսովոյի հակամարտությունն է**: Գաղտնիք չէ նաև, որ ԵՄ երկրները Արցախյան հիմնախնդրի կարգավորումը տեսնում են կառուցողական ինտեգրացիայի ճանապարհով, ինչը ենթադրում է Արցախի սահմանների բացում,

---

[1] Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի միջխորհրդարանական կապեր,- http://www.nankr.am/hy/14

[2] Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը պաշտոնական այցով մեկնել է Հարավային Օսեթիա,- http://www.nkr.am/hy/news/2017-04-25/924/

[3] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժնի նյութեր, ցուցակ 17, գործ 131, թերթ 9

[4] ԼՂՀ ԱԳՆ ղեկավարն ընդունել է Բասկերի Երկրից ժամանած պատվիրակությանը,- http://www.nkr.am/hy/news/2017-02-21/904/

* Իհարկե, բացառություն են կազմում այն երկրները, որոնք իրենց տարածքում ունեն նմանատիպ խնդիր

**Թեպետ այստեղ դժվար է նժարի վրա դնել մի կողմից ինքնորոշման իրավունքի իրացման հարցը, իսկ մյուս կողմից՝ արևմուտքի աշխարհաքաղաքական շահերը

վերջինիս ապամեկուսացում, ժողովուրդների միջև թշնամական մթնոլորտի վերացում: Ուստի անհրաժեշտ է օգտագործել եվրոպական երկրներին որպես ապամեկուսացման հիմնական հարթակի:

Արցախի արտաքին քաղաքականության ակտիվացման ուղղությամբ մեծ ներդրում կարող են ունենալ տարբեր երկրներում վերջինիս ներկայացուցչությունները: Արցախը մշտական ներկայացուցչություններ ունի Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում (այն համատեղում է նաև Կանադայում), Ֆրանսիայում, Ավստրալիայում, Գերմանիայում, Մերձավոր Արևելքում (նստավայրը՝ Բեյրութ)[1]: Թեպետ վերջիններս գործում են որպես լոբբիստական կազմակերպություններ, սակայն դրանց ներկայությունը մի շարք խոշոր պետություններում արդեն իսկ առաջ քայլ է:

Արցախի միջազգային ճանաչման հարցում մեծ գործ ունի կատարելու նաև հայկական սփյուռքը: Մինչև վերջին տարիները սփյուռքի խոշոր հայկական կազմակերպությունների գործառույթները հիմնականում սահմանափակվում էին Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցով: Սակայն ժամանակի ընթացքում հայկական սփյուռքը սկսում է ավելի պարզորոշ գիտակցել, որ Արցախյան հիմնախնդիրը առնվազն պակաս կարևոր չէ հայապահպանության և հայրենիքի պահպանության տեսանկյունից, ուստի հայկական լոբբիստական խմբերը սկսել են ակտիվորեն զբաղվալ նաև այս հիմնախնդրով, այդ թվում՝ Արցախի միջազգային ճանաչման հարցով[2]: 2010թ. ապրիլի 26-ին Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով Հասարակական Խորհուրդը նման խնդրանքով դիմել է սփյուռքի հայկական կազմակերպություններին[3]: Կարող ենք փաստել, որ այս քաղաքականությունն իր առաջին պտուղները տվել է. ԱՄՆ թվով յոթ նահանգներ՝ Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Մեն, Լուիզիանա, Կալիֆոռնիա, Ջորջիա և Հավայի, ճանաչել են Արցախի Հանրապետության անկախությունը[4]:

Շատ ենք կարևորում նաև իսլամական աշխարհի հետ տարվող աշխատանքները: Այստեղ մեր գլխավոր հողումը պետք է անել նրա վրա, որ տարբեր միջազգային հարթակներում հակահայկական բանաձևերին կողմ քվեարկելով վերջիններս չեն նպաստում հակամարտության կարգավորմանը, ավելին՝ կոշտացնում են Ադրբեջանի դիրքորոշումը, ինչը կարող է անխուսափելիորեն բերել նոր պատերազմի: Հենց այս սցենարով էլ հայկական կողմին հաջողվեց 2010թ. ՄԱԿ-ում չեզոքացնել հերթական հակահայկական բանաձևը[5]:

Ամփոփելով մեր հետազոտությունը, կարող ենք փաստել, որ Արցախը բավարարում է անկախ պետության հերթական բնորոշիչին ևս, այն է՝ ինքնուրույն արտաքին քաղաքականություն իրականացնելու ինստիտուցիոնալ առկայությանը: Թեպետ հստակ է նաև, որ այս ուղղությամբ անելիքները դեռ շատ են:

---

[1] http://www.nkr.am/hy/permanent-representations/104/

[2] Бабаян Д., Нагорно-Карабахский конфликт сквозь призму национальной и государственной безопасности, “От самоопределения к международному признанию: Абхазия, Нагорный Карабах, Приднестровье, Южная Осетия”, Тирасполь 2008, стр. 61-74

[3] РПА окажет содействие в вопросе международного признания НКР,- http://armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=25056&SectionID=0&RegionID=0&Date=04/27/2010&PagePosition=1

[4] ԱՄՆ Հավայի և Ջորջիա նահանգները ԼՂՀ ճանաչման մասին բանաձև են ընդունել,- http://nkr.am/hy/news/2016-03-30/799/; http://nkr.am/hy/news/2016-03-04/793/

[5] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժնի նյութեր, ցուցակ 18, գործ 177, թթ.. 121-124

Ռոման Կարապետյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Բանալի բառեր՝ *Արցախի Հանրապետություն, միջազգային ճանաչում, արտաքին քաղաքականություն, անվտանգություն*

Արցախյան հակամարտությունը տարբերվում է իր էությամբ. այն առաջին հերթին ոչ թե տարածքային հակմարտություն է, այլև՝ ճանաչման հարց: Մեր կարծիքով, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման ամենաարդյունավետ ուղին արտաքին քաղաքականությունն է: Անկախ Արցախն արդեն իսկ ձեռք է բերել բազմաթիվ միջազգային կապեր, սակայն ոլորտում անելիքները դեռ բազմաթիվ են: Հոդվածում անդրադարձել ենք Արցախի արտաքին կապերին, նրա միջազգային ճանաչման հարցին, ինչպես նաև՝ Հայաստանի կողմից Արցախի ճանաչման հիմնահարցին:

Роман Карапетян

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРЦАХ: МЕЖДУНАРОДНОЕ ПРИЗНАНИЕ И РАЗБЛОКИРОВАНИЕ

Ключевые слова: *Республика Арцах, международное признание, внешняя политика, безопасность*

Арцахский конфликт отличается в своей сущности: прежде всего, это не территориальный конфликт, но вопрос признания. Мы считаем, что внешняя политика является наиболее эффективным путьем международному признанию Республики Арцах. Арцах уже имеет много международных связей, но еще много несделанного в этом сфере. В статье говорится о внешних связях и о международного признания Арцаха, а также обсуждается вопрос признания Арцаха Арменией.

Roman Karapetyan

THE MAIN DIRECTIONS OF FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF ARTSAKH: INTERNATIONAL RECOGNITION AND UNBLOCADEING

Key words: *Republic of Artsakh, international recognition, foreign policy, security*

The Artsakh conflict differs from others in its essence: first of all, this is not a territorial conflict, but a matter of recognition. We believe that foreign policy is the most effective way of international recognition of the Republic of Artsakh. The independent Artsakh has already received many international contacts, but much has not been done in this sphere. The article talks about external relations and the international recognition of Artsakh, as well as the issue of recognition of Artsakh by Armenia.